ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՍՊՖ_____-2022

« 24 » հունվարի 2022 թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ««Խոտի հոկեյի հայկական ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ ֆեդերացիա), ի դեմս նախագահի, որի անունից, համաձայն լիազորագրի հանդես է գալիս գլխավոր քարտուղար Արման Վարդանյանը, որը գործում է ֆեդերացիայի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2121-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում), Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ֆեդերացիաներին 2022 թվականին տրամադրվող ֆինանսական աջակցության չափը հաշվարկող հանձնաժողովի նիստի 2021 թվականի դեկտեմբերի 13-ի արձանագրությունը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N 692-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի N 240-Ա/1 հրամանը (այսուհետ՝ հրաման)՝ «Հայաստանի Հանրապետության առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը ծրագրի իրականացման նպատակով ֆեդերացիային հատկացնում է որոշմամբ նախատեսված մինչև 7,000,000 (յոթ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ գումար՝ ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված չափաքանակներով՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր միջոցառման (այսուհետ՝ միջոցառում) ֆինանսավորման համար ֆեդերացիայի կողմից ներկայացված նախախահաշիվը, իսկ ֆեդերացիան պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ ֆեդերացիայի կողմից իրականացվելիք միջոցառումները ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը համարվող N1 հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. **Պետական մարմինն իրավունք ունի՝**

2.1.1. ցանկացած ժամանակ տվյալ բյուջետային տարվա ֆինանսական միջոցների արդյունավետ ծախսման մասով իրականացնել ուսումնասիրություն՝ այդ թվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ աուդիտ, առանց խոչընդոտելու ֆեդերացիայի աշխատանքներին.

2.1.2. որոշմամբ և հրամանով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.3.1. առանց հիմնավոր պատճառի ֆեդերացիան ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.3.2. ֆեդերացիան երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում).

2.1.4 հետևելու միջոցառումների կազմակերպման, անցկացման և (կամ) մասնակցության ընթացքին.

2.1.5 պարբերաբար վերլուծել Ֆեդերացիայի կողմից իրականացվող աշխատանքները [illegible] առաջարկություններ գործունեության հետագա ծրագրերի բարելավման վերաբերյալ [illegible] ցուցումներ բացահայտված թերությունների վերացման ուղղությամբ.

2.1.6 հետ պահանջելու միջոցառման իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցների և փաստացի կատարված ծախսերից առաջացած տնտեսումը.

2.1.7 սույն պայմանագրի 2.4-րդ կետի և հրամանի պահանջները չկատարելու կամ ոչ [illegible] կատարելու դեպքում Ֆեդերացիայից հետ պահանջել հատկացված ֆինանսական միջոցները [illegible] դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը.

2.1.8 հատկացնել միջոցառման ծախսերի նախահաշիվը գերազանցող, փաստացի կատարված, փաստաթղթերով հիմնավորված (այդ թվում ոչ ֆինանսական ցուցանիշների փոփոխության արդյունքում առաջացած) ծախսը պետական մարմնի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված դրական մասնագիտական եզրակացության հիման վրա.

2.1.9 ամփոփելու և գնահատելու Ֆեդերացիայի կողմից ներկայացված տարեկան մարզական գործունեության ծրագրի կատարման արդյունավետությունը.

2.1.10 իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

2.2. Ֆեդերացիան իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը.

2.2.2 պետական մարմնից պահանջելու վերացնել բոլոր այն թերություններն ու բացթողումները, որոնք խոչընդոտում են Ֆեդերացիայի լիարժեք իրականացնելու իր գործունեությունը սույն պայմանագրի շրջանակներում.

2.2.3 իրականացնելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Ֆեդերացիային.

2.3.2.կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական մարմինների հետ.

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.

2.3.4 միջոցառումների կազմակերպման, անցկացման և (կամ) մասնակցության նպատակով պետական աջակցության միջոցների շրջանակում, պետական մարմնի կողմից մշակված միջոցառման ծախսերի նախահաշվի սահմաններում, Ֆեդերացիային ապահովել համապատասխան ֆինանսական միջոցներով.

2.3.5 Ֆեդերացիայի ներկայացրած հայտում և պաշտոնական հրավերում արտարժույթով նախատեսված գումարը հատկացնել ֆինանսավորման հայտը կազմելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած տվյալ արտարժույթի փոխարժեքին համապատասխան.

2.3.6 Ֆեդերացիային ցուցաբերել անհրաժեշտ գործնական և մեթոդական օգնություն:

2.4. Ֆեդերացիան պարտավոր է՝

2.4.1 Իրականացնել ծրագրի շրջանակում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով.

2.4.2 պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.

2.4.3 կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով յուրաքանչյուր միջոցառման ավարտից հետո տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պետական մարմին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին բովանդակային հաշվետվություն, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ տարեկան հաշվետվություն.

2.4.5 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6 պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Ֆեդերացիան պարտավորվում է անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.

2.4.7 ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.

2.4.8 հատկացված միջոցներն օգտագործել սույն պայմանագրի 1.2-րդ կետում նշված N 1 հավելվածով նախատեսված միջոցառումների իրականացման համար՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ.

2.4.9 սույն պայմանագրի 1.2-րդ կետում նշված N 1 հավելվածով նախատեսված ծրագրի իրականացման համար ապահովել Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի ուսումնամարզական հավաքների մասնակիցների և պատվիրակությունների կազմի ձևավորումը և ընտրությունը՝ համաձայն հրամանի.

2.4.10 միջոցառման ֆինանսավորում ստանալու հայտը ներկայացնել պետական մարմին (հրամանով հաստատված կարգի համաձայն) մինչև միջոցառման անցկացմանը նախորդող ամսվա 15-ը, իսկ միջոցառումների ժամանակացույցի փոփոխության դեպքում՝ այն նախապես համաձայնեցնել պետական մարմնի հետ և այդ միջոցառման հայտը պետական մարմին ներկայացնել մինչև միջոցառման անցկացմանը նախորդող ամսվա 25-ը.

2.4.11 ավարտված միջոցառման փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը (հրամանով հաստատված կարգի համաձայն և ժամկետներում) ներկայացնել պետական մարմին, նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են Ֆեդերացիայում և վերջինս պատասխանատվություն է կրում դրանց իսկության համար:

2.4.12 Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Ֆեդերացիան Պետական մարմնին վճարում է տուգանք չներկայացված հաշվետվության համար պետական մարմնի կողմից հաստատված նախահաշվի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր օրացույցային օրվա համար:

2.4.13 յուրաքանչյուր միջոցառման իրականացման համար հատկացված ֆինանսական միջոցները և փաստացի կատարված ծախսերից առաջացած տնտեսումը վերադարձնել հետ՝ պետական մարմնի պահանջով:

2.4.14 չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսում և խնայողություն) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2022 թվականի դեկտեմբերի 25 -ը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով կարող է իրականացնել մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Ֆեդերացիային տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Ֆեդերացիայից կարող են պահանջվել գրավոր և բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1 Սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարը պետական մարմինը փոխանցում է Ֆեդերացիային՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N2 հավելվածի՝ վճարման ժամանակացույցի:

4.3 Պետական մարմինը վճարումն իրականացնում է անկանխիկ՝ դրամական միջոցները կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված [illegible] պատշաճ կատարման դեպքում Ֆեդերացիան պարտավորվում է [illegible] չիրականացված միջոցառման չափով: Պետական մարմինը սույն կետով նախատեսված [illegible] հաշվարկում և հաշվանցում է Ֆեդերացիային վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից [illegible] տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերություններ[illegible] Պայմանագիրը գործում է մինչև պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ [illegible] չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, [illegible] անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը [illegible] կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են [illegible] ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, [illegible] հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, [illegible] մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է [illegible] ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը [illegible] մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական [illegible] ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով [illegible] որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի [illegible] մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, [illegible] նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՖԵԴԵՐԱՑԻԱ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Խոտի հոկեյի հայկական ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք	ք. Երևան, Անդրանիկի 52, բն. 15.
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ,
Հ/Հ 900011032027	Հ/Հ՝ 2474202397630000
ՀՎՀՀ՝ 02698732	ՀՎՀՀ՝ 02569828
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	էլ. փոստ՝ armhokey@gmail.com
	Գլխավոր քարտուղար՝
_____ Վ. Գասպարյան	_____ Ա. Վարդանյան
Կ. Տ.	Կ. Տ.

Հավելված N1
2022 թ. հունվարի ___ **-ին**
կնքված N ՍՊՖ ___ **-2022 պայմանագրի**

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ Ն Ե Ր

	Իրականացվելիք միջոցառման անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը(դրամ)
1.	**Խոտի հոկեյի հայկական ֆեդերացիա** ՀՀ առաջնություններ (պատանիների - 4) Եվրոպայի առաջնություն (պատանիների - 1) Միջազգային մրցաշար (պատանիների - 1) COVID 19 թեստի վճարի հատուցում Միջազգային և Եվրոպական ֆեդերացիաններին անդամակցությունան տարեկան վճար:	ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում	« **Խոտի հոկեյի հայկական ֆեդերացիա** » հասարակական կազմակերպության կողմից մարզիկների պատրաստում և հոկեյ մարզաձևի ՀՀ առաջնությունների և միջազգային մրցաշարերի անցկացում, ուսումնամարզական հավաքների կազմակերպում և միջազգային միջոցառումներին մասնակցություն	**Արդյունքները** ա) տարբեր մարզաձևերից Հայաստանի Հանրապետության առաջնությունների մասնակիցների թվի աճ. բ) Հայաստանի Հանրապետության առաջնությանը մասնակցող մարզերի, քաղաքների, մարզական կազմակերպությունների թիմերի քանակի ավելացում: **Գնահատման չափանիշները** Վերոնշյալ ցուցանիշների վերլուծություն նախորդ տարիների ցուցանիշների համեմատությամբ:	2022 թ. դեկտեմբերի 30-ը	7,000,000

Ընդամենը

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ՖԵԴԵՐԱՑԻԱ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Խոտի հոկեյի հայկական ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2 րդ շենք	ք. Երևան, Անդրանիկի 52, բն. 15,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ,
Հ/Հ 900011032027	Հ/Հ 2474202397630000
ՀՎՀՀ՝ 02698732	ՀՎՀՀ՝ 02569828
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	Էլ. փոստ՝ armhokey@gmail.com
Վ. Պապոյան	Գլխավոր քարտուղար՝
Կ. Տ.	Ս. Կարապետյան
	Կ. Տ.

Հավելված N2
2022 թ. հունվարի 24 -ին
կնքված N ՍՊՖ-26 -2022 պայմանագրի

«Խոտի հոկեյի հայկական ֆեդերացիա» ՀԿ-ի 2022թ. ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման չափի վճարման ժամանակացույց(աճողական)

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Ընդամենը տարեկան (հազար դրամ)	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից (հազար դրամ), ընդ որում՝											
		1 եռամսյակ			6 ամիս			9 ամիս			տարի		
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ծրագիր	7000,0	2628,8	2628,8	2628,8	6487,0	6487,0	6487,0	7000,0	7000,0	7000,0	7000,0	7000,0	7000,0
Ընդամենը	7000,0	2628,8	2628,8	2628,8	6487,0	6487,0	6487,0	7000,0	7000,0	7000,0	7000,0	7000,0	7000,0

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցե՝ ք. Երևան, Կառավարական 2-րդ շենք
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011032027
ՀՎՀՀ՝ 02698732
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝

Վ. Գասպարյան

ՖԵԴԵՐԱՑԻԱ

«Խոտի հոկեյի հայկական ֆեդերացիա» հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Անդրանիկի 52, բն. 15,
Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ,
Հ/Հ՝ 2474202397630000
ՀՎՀՀ՝ 02569828
Էլ. փոստ՝ armhokey@gmail.com
Գլխավոր քարտուղար՝

Ա. Վարդանյան
Կ. Տ.